

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2009 թվականի հունվարի 30-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Ասատրյան Լիլիթ	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Սողոմոնյան Սյուզաննա, Կարեն Զարոյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Խաչատրյան Լիա	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Համբարձումյան Սասուն	«Բաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
Հովհաննիսյան Միհրան	«Եղվարդ» ՋՕԸ
Մաիլյան Նարինե	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Կարինե Մովսիսյան	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
Միքայելյան Շիրակ	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
Շահինյան Պողոս	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Ոսկանյան Արման	«Տավուշի զարգացման» ՀԿ
Վերանյան Անդրանիկ	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Տեր-Հովակիմյան Ալեքսանդր	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Ենգիբարյան Վիկտոր	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ

Նիստից բացակայում էին՝

Նազարյան Հազարայետ	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ

Նիստին մասնակցում էին նաև՝

Արա Հովսեփյան	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Արմինե Միմոնյան	Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական
Ռուզաննա Ավագյան	Մախարովի անվ. մարդու իրավունքների կենտրոն
Լևոն Ներսիսյան	«Աստղիկ» ՀԿ
Մովսես Մարգարյան	Հայկական կարմիր խաչի ընկերություն

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր Լիլիթ Ասատրյանը:

Նիստի նախագահողն առաջարկեց հաստատել ներկայացված օրակարգը: Վ. Ենգիբարյանն առաջարկեց նիստի աշխատանքները սահմանափակել մինչ ժամը 17:00-ն:

Օրակարգի վերաբերյալ Ս. Սողոմոնյանն առաջարկեց ստեղծել էթիկայի հանձնաժողով:

Ընդունելով վերոնշյալ առաջարկությունները՝ օրակարգը հաստատվեց միաձայն:

N	Սկիզբը	Օրակարգի հարց	Ձեկուցող/ պատասխանատու
1.	15:00	Տեղեկատվության ներկայացում ՀՄՀ-Հայաստանի ծրագրի առաջընթացի վերաբերյալ	ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյան
2.	15:30	Բնապահպանական դիտորդի պաշտոնի համար ներկայացված հայտերի դիտարկում. հարցազրույց	ՀՄՀ-Հայաստանի բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար Ա. Սիմոնյան ՇԽ անդամներ
3.	16:00	ՇԽ աշխատանքների առաջնահերթությունների հստակեցում ՇԽ անդամի դերը և հնարավոր ներդրումը ՀՄՀ-Հայաստան ծրագրին	
4.	16:30	Այլ հարցեր ա) Տեղեկատվության ներկայացում ՇԽ առանձին անդամների կողմից իրականացրած աշխատանքների վերաբերյալ բ) ՇԽ անդամ Կ. Ջադոյանի կողմից ներկայացված ՀՄԿ գնահատման ինդիկատորների կատարողականի բարելավման ծրագիր գ) Էթիկայի և շահերի բախման հանձնաժողովի ստեղծում	

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի տնօրեն Ա. Հովսեփյանը: Նա նշեց, որ դեկտեմբերի վերջին ՀՄՀ-Հայաստանը ստացել է 2009թ. առաջին եռամսյակային հատկացման հայտը, որը հիմնականում ուղղված է ոռոգման ենթակառուցվածքներ ծրագրին: Այդ բաղադրիչի ուղղությամբ սկսվել են առաջին շինարարական աշխատանքները, մասնավորապես «ՍԱԳ-Ե» (Ֆրանսիա) եւ «ՇՄՇ-23» (Հայաստան) կոնտրոլի մի հետ կնքված պայմանագրի շրջանակներում սկսվել են մայր ջրանցքների վերականգնման աշխատանքները, սպասվում է նոր պայմանագրերի կնքում:

Ա. Հովսեփյանը նշեց նաև, որ առաջիկա ԿԽ նիստին ներկայացվելու է վարկային բաղադրիչի իրականացման նոր ուղեցույցը, ծրագրի արդյունավետության բարձրացման մեխանիզմները և այլն: ՇԽ անդամ Ա. Վերանյանը հարցրեց, թե ՀՄԿ-ի կողմից կան արդյոք մտահոգություններ ծրագրի հետագա իրականացման վերաբերյալ՝ մեջբերելով մամուլում հաճախ հայտնվող տարբեր տեղեկատվություններ: Ա. Վերանյանը կարծիք հայտնեց, որ նման պարագայում ՇԽ-ը պետք է ունենա իր դերակատարությունը, առնվազն արտահայտի դիրքորոշում:

Ա. Հովսեփյանը բարձր գնահատեց ՇԽ անդամների պատրաստակամությունը ակտիվ մասնակցություն ունենալ ՀՄՀ-Հայաստանի ծրագրի շուրջ ծավալվող քննարկումներին: Որպես դրա վառ ասպարեց Ա. Հովսեփյանը նշեց վերջերս ՇԽ անդամ Կ. Ջադոյանի կողմից ուղարկված գնահատման ինդիկատորների կատարողականի բարելավման ծրագիրը, որը մշակվել է Էկոնոմիկային նախարարության կողմից և դեռ գտնվում է նախագծային փուլում: Իսկ ինչ վերաբերում է ծրագրի հետագա իրականացման հարցին, այն կորոշվի մարտին կայանալիք ՀՄԿ խորհրդի նիստին. ներկայումս ՀՄՀ-Հայաստանն իր ընթացիկ աշխատանքներն իրականացնում է սովորական հունով:

ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանը նշեց, որ ներկայումս ընթացող Արգնի-Շամիրամ մայր ջրանցքի վերականգնման աշխատանքներն ընթանում են նորմալ հունով և որակյալ մեխանիզմների կիրառմամբ: Մ. Հովհաննիսյանը հարցրեց, թե ինչպես են որոշվելու երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման համար ներկայացված դիմումների ճակատագիրը, դրանց ընտրությունը և այլն:

ՀՄՀ-Հայաստանի տնօրեն Ա. Հովսեփյանը նշեց, որ ներկայացված բոլոր հայտադիմումների հիման

վրա կկազմվեն նախագծեր, կորոշվի դրանց արդյունավետությունը և կընտրվեն առավել հիմնավորված հայտերը:

Հրավիրյալ Լ. Ներսիսյանի հարցը և մտահոգությունը վերաբերում էր ճանապահների վերանորոգման աշխատանքների ընթացքում հաշմանդամների համար օրենքով նախատեսված անհրաժեշտ պայմանների և շարժվելու հնարավորությունների ապահովումը, համապատասխան կանգառների պատրաստումը:

Հարցերը սպառվելուց հետո նախագահող Լ. Ասատրյանն առաջարկեց ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրենի կողմից ներկայացված տեղեկատվությունը: Առաջարկությունը հաստատվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

ԿԽ բնապահպանական դիտորդի պաշտոնի համար ներկայացված հայտադիմումները ներկայացնելու համար ձայնը տրվեց ՀՄՀ-Հայաստանի բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար Ա. Միմոնյանին: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ ներկայացվել են յոթ հայտեր, որոնցից երկուսը չեն համապատասխանում ներկայացված պահանջներին, երկու դիմորդներին («Կայուն ջրային միջավայր» ՀԿ և «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ) ՇԽ-ը արդեն լսել է, իսկ մնացած երեք թեկնածուները հրավիրվել են ՇԽ նիստին: «Վայրի բնության և մշակութային արժեքների պաշտպանության» ՀԿ նախագահ Ռ. Խաչատրյանը չի կարողացել մասնակցել քաղաքից բացակայելու պատճառով:

ՇԽ անդամները իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին ներկա երկու հայտատուներին՝ «Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ Լևան Ջանոյանին և «Երիտասարդական խորհրդարան» ՀԿ անդամ Հովհաննես Մարտիրոսյանին: Հարցերը մասնավորապես վերաբերում էին ԿԽ անդամի դերի իրենց պատկերացումներին, մասնագիտական փորձառությանը, կազմակերպության առաքելությանը և այլն:

ԿԽ բնապահպանական դիտորդի ընտրության վերաբերյալ եղավ առաջարկություն սպասել և լսել նաև «Վայրի բնության և մշակութային արժեքների պաշտպանության» ՀԿ նախագահ Ռ. Խաչատրյանին, ով չէր կարողացել մասնակցել ՇԽ նիստին քաղաքից բացակայելու պատճառով:

Առաջարկությունը դրվեց քվերակության և անցավ 9 կողմ, 1 դեմ և 2 ձեռնպահ ձայներով:

Այսպիսով, ՇԽ անդամները որոշեցին առաջիկայում լսել նաև ԿԽ բնապահպանական դիտորդի թեկնածու Ռ. Խաչատրյանին, որից հետո անցկացնել քվերակություն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

ՇԽ անդամ Ա. Վերանյանը ՇԽ անդամների դատին ներկայացրեց առաջիկա աշխատանքների կազմակերպման ժամանակացույցը փետրվար-մարտ ամիսների համար: Ա. Վերանյանը նշեց, որ ժամանակացույցը բաց է նոր առաջարկությունների և նախաձեռնությունների համար: Որպես առանձին առաջարկություն Ա. Վերանյանը բարձրացրեց ՀՄԿ-ի հետ քննարկումների և բանակցությունների հնարավորությունները, հատկապես հաշվի առնելով Հայաստանի ծրագրի շուրջ ծավալվող քննարկումները, Վրաստանի նախադեպը և քաղաքացիական հասարակության անդամներին հուզող այլ հարցեր:

Ա. Վերանյանի առաջարկության վերաբերյալ եղան նոր մտահաղացումներ և առաջարկություններ, մասնավորապես, ՇԽ անդամ Ս. Համբարձումյանն առաջարկեց կազմակերպել հեռուստակամուրջ ՇԽ անդամների և ամերիկյան կողմի մասնակցությամբ:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը բարձրացրեց այն հարցը, որ պետք է հատակեցնել նման հանդիպման նպատակները և խոսակցության թեմաները, իսկ Վ. Ենգիբարյանը առաջարկեց համագործակցել մի շարք լոբիստական կազմակերպությունների հետ:

Ա. Հովսփյանը ողջունեց ՇԽ անդամների կողմից ներկայացված առաջարկությունները և որպես առաջիկա գործողություն առաջարկեց կենտրոնանալ ԱՄՆ դեսպանի և ՀՄԿ տեղական ներկայացուցիչների հետ հանդիպման վրա:

Ամփոփելով բոլոր առաջարկությունները՝ նախագահողն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենին բանակցել ամերիկյան ներկայացուցիչների հետ ՇԽ անդամների հետ հնարավոր հանդիպման շուրջ, որը պետք է տեղի ունենա մինչ ՀՄԿ խորհրդի՝ մարտի 11-ի նիստը: ՇԽ առաջիկա աշխատանքների վերաբերյալ նիստի նախագահողն առաջարկեց մինչ ՇԽ հաջորդ նիստը ներկայացնել նոր առաջարկություններ և հաստատել առավել ամբողջական գործողությունների ժամանակացույց:

ՇԽ անդամները համաձայնեցին վերոնշյալ առաջարկության շուրջ:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ

ՀՄԿ գնահատման ինդիկատորների կատարողականի բարելավման ծրագրի վերաբերյալ արտահայտվեց Կ. Ջադոյանի լիազոր ներակայացուցիչ Ս. Սողոմոնյանը: Նա նշեց, որ Կ. Ջադոյանը մասնակցել է «Եվրասիա հիմնադրամի» կողմից կազմակերպված քննարկմանը վերոնշյալ ծրագրի վերաբերյալ: Ս. Սողոմոնյանը կարծիք հայտնեց, որ ծրագրի ցանկացած կետի կատարումը կարող է հանդիսանալ առաջընթաց Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման գործում:

ՀՄԿ կատարողական վերաբերյալ արտահայտվեց նաև Ա. Հովսեփյանը. նշեց, որ այն բավականին լուրջ և աշխատատար փաստաթուղթ է և կարող է ծառայել որպես սկիզբ Հայաստանի կատարողականի ցուցանիշների բարելավման համար:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց ՇԽ անդամներին 10-15 օր ժամանակահատվածում մանրակրկիտ ուսումնասիրել փաստաթուղթը, որից հետո անցկացնել համատեղ քննարկում և հանդես գալ մեկ ընդհանուր դիրքորոշմամբ:

Ա. Հովսեփյանն առաջարկեց ԱՄՆ դեսպանի և ՀՄԿ ներկայացուցիչների հետ հնարավոր հանդիպման թեմաներից մեկը նախանշել վերոնշյալ ծրագիրը, ինչպես նաև անցկացնել առանձին հանդիպում ծրագրի հեղինակների հետ՝ հանձնիս Էկոնոմիկայի նախարարությանը:

ՇԽ անդամներն իրենց ընդհանուր համաձայնությունն արտահայտեցին առաջարկության վերաբերյալ:

Ս. Սողոմոնյանի առաջարկությունը՝ էթիկայի հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ որոշվեց հետաձգել:

Նիստը փակվեց ժամը 17.05:

Նախագահող՝

Լ. Ասատրյան

Նիստն արձանագրեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը:

30-ը հունվարի, 2009թ.